

ԿՈՎԱՅԻ ՀՈՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԴՐՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԻՆ Խ 25

13814

ԱՐԵՏԻ ԱՀԱՐՈՆԵԱՆ

# ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

1. ԴԱՏԱԿՈՐԸ
2. ՃՆՁՂՈՒԿԻ ՄԱՀԸ
3. ՅԵԿՈՆ ՈՒ ՄԵՐՈՒԸ

Մ  
68

ԹԻՖԼԻՏ

Յաղութեան և Ալպանիանի, Փոխ. 7

1916

891.99  
Ա - 42

gp

9P

891.99  
W-42

21 JUN 2005

19 NOV 2010

ԿՈՎԻԱՆԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐՈՒԿՉՈՎԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ Խ 25

68

## ՍԻԵՏԻՄ ԱՀԱՐՈՒԵԱՆ

# ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

1. ԳԱՏԱԿՈՐԸ
2. ՃԱՃՂՈՒԿԻ ՄԱՀԸ
3. ԾԵԿՕՆ ՈՒ ՄԱՐԱԼԸ

սի:

376

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Տպարան Ն. Աղանեան, Պօլից. 7.  
1916

## ԴԱՏԱՎՈՏԱՆՑ

Քանի տարիներ են անցել և ես դեռ չեմ մոռացել այն զարմանալի դատաստանը:

Փոքր էի, հազիւ տամներեք տարեկան, բայց լաւ յիշում եմ որ այն երեկոյ հայրս զայրացած տուն վերադարձաւ այգուց: Փոքրիկ հորթին պարանից քաշ տալով ետեսից և կանաչ, թարմ խոտի մի կոյտ թերի տակ՝ նա բակը մտաւ խորհրդաւոր լոռութեամբ: Ես նկատեցի որ նրա մորթէ փափախը կախւած էր ծոծրակի վրայ՝ բաց թողնելով խիստ կընձռոտ ճակատը. շալէ չուխայի և արխալուղի թերը սովորականից աւելի վեր էին քշտւած, ասել էր՝ թէ նա այգում խոտ հնձելուց յետոյ՝ մոռացել էր ցած բերել և՝ որ ամենից աւելի գլխաւորն էր ու նշանակալիցը, կեռ ծայրով իր ձեռնափայտը հորթի պարանի հետ միատեղ՝ շատ սպառնական ձեռվ էր պահել աջ ձեռքում:

Բոլոր այս նշանները չարագուշակ էին. կասկած չը կար, որ նա զայրացած էր. իսկ երբ նա զայրացած էր, նշանակում էր թէ տանեցիներից մէկն ու մէկը յանցանք էր գործել: Մեզանից հվ էր յանցաւորը և ինչով, ահա այդ էր, որ սկսեց ինձ լուրջ կերպով զբաղեցնել:

—Կապիր հորթը, Սարգիս, հրամայեց նա ինձ խստութեամբ:



3570-2002

Ես մօտեցայ, հորթի պարանն առայ նրա ձեռքից. կապում էի և միւնոյն ժամանակ մտածում իմ անցրած օրւայ մասին։ Առաւօտը վաղ նախաճաշ էի տարել հնձւորներին և վերադարձել կէսօրին մօտ։ Ընթացքս վատ չէր եղել. միշտ է, ճանապարհին մի պատի ճեղքում քանդել էի մնձուկի մի բուն և ճագերը դուրս հանել, բայց հայրս այդ չէր կարող իմանալ, ինչպէս և ոչ ոք, որովհետև այդ տեղի էր ունեցել հեռաւոր դաշտերում, բոլոր աչքերից հեռու։ Մեր հարևան պառաւ Նուբարի թխած թաց աթարներից մի քանիսի վրայ քայլել էի ու տըռել, հէնց այնպէս զւարձանալու համար. մէկ էլ որ նա յետեւիցս մի օր չանչ էր արել իմ մի չարութեան պատճառով. բայց այդ էլ անշուշտ ծածուկ էր մնացել, այլապէս՝ հօրիցս առաջ պառաւը մեր դուանը կը լինէր հազար ու մի անէծքով։ Ճաշից յետոյ գնացել էի բամբակի արտը, ուր աղջկերք ու կանայք քաղիան էին անում մօրս ու երկու քոյրերիս հետ և մինչեւ երեկոյ այնտեղ էի մնացել վազկղելով թիթեռների և թռչունների ետեւից։ Այսպիսով օրւայ երկրորդ մասը ես արդէն շատ աւելի անմեղ էի անցկացրել, նոյն իսկ փոքրիկ ծառայութիւններ էի կատարել. ջուր էի բերել քաղիանւորներին և ագռաւներին հալածել, որ նրանց հացի պաշարը չը գողանան։ Ամբողջ օրւայ այս բաւական ախորժելի պատկերը մըտքովս անցնելուց յետոյ, ես հորթը կապեցի և ամենայն համարձակութեամբ բարձրացայ սրահը, ուր քոյրերս անկողիններն էին պատրաստում։

Մինչ այդ՝ հայրս խոտը ցած դրեց, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց, փայտն ու գլխարկը դնելով կողքին։ Մայրս կովկիթն էր լւանում, սպասելով կովերին, կթելու համար։ Ես աչք չէի հեռա-

ցնում հօրիցս. նա անհանգիստ էր և մի քանի անգամ ճակատը շփեց ու դարձաւ մեծ քրոջս.

—Աղջի, Թորոսը այս առաւօտ կովերը որ կողմով դաշտ տարաւ. այգու կողմնվ, թէ նախը ճանապարհով։

—Զը գիտեմ, հայրիկ. առաւօտը երբ քաղահանի էինք գնում, նա մեղանից առաջ քշեց, գիւղից դուրս եկաւ, նրան չը հասանք։

—Սյգու կողմից, ի հարկէ. նա միշտ այն կողմից է տանում, —բացականչեցի ես, հէնց այնպէս, առանց մտածելու, թէ իմ ասածը որևէ բանի կարող էր ծառայել։

—Նա է, ուրիշ ով կարող է լինել. նզովից արմատ, միշտ նա, —մոմուց հայրս ու լոեց։

Թորոսը իմ խորթ եղբայրն էր, հօրս առաջին ամուսնութիւնից մնացած միակ տղան։ Ես և քոյրերս մեր ամենափոքր հասակից տեսել էինք նրան միշտ լրակեաց, մոայլ, մտածկու ու յամառ։ Նա չէր սիրել մեզ և մենք չէինք սիրել նրան։ Նա արդէն տասնեօթ-տասնութ տարեկան էր այժմ, բայց դարձեալ թախծոտ ու լրակեաց, դարձեալ անմասն ընտանեկան կեանքին, դարձեալ առանց սիրոյ ու մենաւոր։ Ինչու չէինք սիրում նրան, ես չը գիտեմ. նա մեզ երբէք վատ բան չէր արել. գուցէ հէնց այն պատճառով, որ նա միշտ լուռ էր և նրա այդ լոռութեան տակ կարծես խորին արհամարհանք կար դէպի մեզ։ Բայց հայրս նրանից գժգոհելու, նոյնիսկ ատելու խորունկ պատճառներ ունէր. գոնէ ես այդպէս էի կարծում այն ժամանակ։ Հայրս չէր սիրում նրան նախ՝ որովհետև նա յամառ էր ու միշտ մոայլ և երբէք հօրս երեսին ուղիղ չէր նայի։ «Կախ գլուխ» տղայ է, մանկութիւնից այդպէս էր, ասում էր նա առան-

ձին ցաւով, աւելացնելով որ «կախ գլուխ» մարդիկ միշտ կասկածելի են: Եթէ միայն այդ լինէք. բայց Թորոսը ուրիշ աւելի խոշոր թերութիւններ ունէր նրա աչքում. այսպէս, երբ հայրս նրան կանչելու լինէք, նա երբէք չէք պատասխանի «հրամմէ», այլ միայն «հմ», որին ի պատասխան կը լսէք հօրս ձայնը.

—Չո՛ռ, հրամմէ չես կարող ասել, բերանդ պապանձի:

Ո՞չ, Թորոսը հրամմէ չէք ասի:

Այդ դեռ քիչ է. ինքը Թորոսը հօրս երբէք նախ չէք դիմի, և ծայրայեղ դէպում, որ կը պատահէք տարին մի երկու-երեք անգամ հազիւ, երբէք չէք կանչի «հայրիկ», այլ միայն «Էյ», Եւ ամեն անգամ երբ այդ հազւագիւտ առիթը ներկայանար, երբ դըրսից մէկը յանձնարարէր Թորոսին հօրս կանչել, նա ներս կը մտնէր, մի քանի վայրկեան կը մնար դուան առաջ կարմրած ու կարկամւած. մենք բոլորս կը հասկանայինք պատճառը և շունչներս պահած, անհանգստութեամբ ու սրտի թրթիռով կը սպասէինք, որ նա վերջապէս արտասանի այնքան հեշտ, այնքան դուրեկան բառը՝ «հայրիկ»... Շրթունքները կը մնային անշարժ և «Էյ» բացականչութիւնը կը գար ամենքիս յոյսերն ի դերև հանելու: Հայրս վշտով ու դայրոյթով լի՝ մի լուռ հայեացք կը նետէր նրա վրայ, ապա գլուխն օրօրելով կը դառնար մօրս.

—Լսեցի՞ր, կնիկ. պապանձւես, տղայ, հարազատ ծնողին «հայրիկ» ասել չի ուզում:

Ընդհանուր մի տիրութիւն կը համակէր բոլորիս, որ կամաց-կամաց կը փոխէր զայրոյթի այս մեր անօրինակ եղբօր դէմ, որ մի անհասկանալի յամառութեամբ տարիներ շարունակ մեր ընտանեկան խաղաղութիւնը խռովում էր իր անմիտ վար-

մունքով: Մենք զարմանում էինք և ատում նրան, որովհետեւ փոքր էինք և մեր տհաս գլուխները տակաւին չէին կարողանում հասկանալ որ երբ երեխան զրկուում է մօրից և մատնուում է անուշադրութեան հօր կողմից, շրթունքները համր են կտրուում, սիրտը սառչում է և հոգին կարծրանում ու ըմբոստանում իր մենաւորութեան մէջ:

Նա գիտէր, այդ զարմանալի Թորոսը, թէ որքան անախորժութիւններ, քանի մանր ու մեծ ցաւեր են կապւած միշտ իր սակաւախօսութեան, իր յամառութեան ու իր անանց մռայլի հետ, բայց և այնպէս մնում էր նոյնը, կրելով բոլորը՝ և թուք ու մուր, և անէծք ու հայհոյանք, և քէն ու ատելութիւն. կրում էր և դարձեալ լուռ էր: Եւ մենք բոլորս առանց այդ նկատելու կամաց-կամաց նրա դահիճներն էինք դարձել: Բոլոր մեր ծածուկ յանցանքների ու սխալների համար պատասխանատուն ու մեղաւորը միշտ նա էր: Եթէ աման էր կոտրւած, անպատճառ Թորոսն էր կոտրել. մածունի կամ կաթի սերը, թարմ կարագը՝ անպատճառ նա էր գողացել, ինչպէս և այգում կամ բոստանում հասած առաջին պտուղը: Մենք արդէն վաղուց դադարել էինք նկատել թէ որքան անարդար, որքան անողորմ ենք, և մեզ բոլորովին բնական էր թւում վերջ ի վերջոյ որ Թորոսը մեր մեղերը քաւէ: Չի բողոքում, միշտ լուռ է, թող կը ուրեմն:

Բարեբաղդաբար մեր բոլորիս և Թորոսի համար հայրս թէկ խիստ էր, բայց վերին աստիճանի զթոտ. նրա բոլոր դժգոհութիւնն ու զայրոյթը վերջանում էր սովորական անէծքով կամ մօրս առաջ անվերջ գանգատներով:

Թորոսն ամբողջ օրը դաշտումն էր լինում, մեր

տաւարի ետևից: Երբ երեկոյեան տուն էր գալիս և հայրս սկսում էր նրան յանդիմանել նրա որևէ յանցանքի համար, որի հեղինակը սովորաբար ես էի կամ քոյրերից մէկը, նա առանց նայելու մօտենում էր հացի տաշտին, մի հաց վերցնում, փաթաթում թւի տակ և լոռութեամբ գուրս գալիս, թողնելով որ հայրս շարունակի իր անէծքը, գանգատն ու տըրտունջները:

Ամենից աւելի ինձ էր զայրացնում այդ մենաւոր, լուռ ու ըմբոստ թորոսը և ամենից աւելի անողորմը ես էի նրա վերաբերմամբ: Շաբաթ չէր անցնի, որ իմ որևէ անիրաւութեան համար նա մի երկու անգամ թուք ու մուր չուտէր: Ես ծնողներիս վերջին երեխան էի, երես տւած, չար, կայտառ, ասում էին՝ խելացի ու ճարտարախօս, բոլորովին հակապատեր եղօրս: Հայրս մեծ յոյսեր էր կապելիմ ապագային, այդ ես գիտէի, հպարտ էի և... միշտ անարդար:

Այդ չարութիւնն էր, որ այն երեկոյ ինձ թելագրեց փորփորել իմ անցրած օրը, որ եթէ յանցանք գտնեմ, պատրաստ լինեմ թորոսի վրայ ձգելու: Օրս հրաշալի էի անցրել. չը գտայ ոչինչ, ոչինչ, որ ընդունակ լինէր հօրս զայրոյթը շարժել: Կատարուած յանցանքն ուրեմն ինձանից անկախ էր:

Ես հանգիստ էի և սկսեցի սուլել կամ ացուկ:

Կովերը դաշտից վերադարձան. Թորոսն էլ նրանց ետևից ներս մտաւ դռնից, ինչպէս միշտ, գլուխը քաշ, դէմքն արեառ, յոգնած ու մոայլ: Նա կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որոնք պիտի կթւէին: Ապա ձեռնափայտը դրեց մի անկիւնում, նստեց իր սովորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրայ և սկսեց տրեխների միջից

թափ տալ աւագի հատիկները և գուլպաների վրայից փշերը:

Մայրս կովերն էր կթում, քոյրերս օգնում էին նրան:

— Թորոս,— յանկարծ լսեց հօրս ձայնը.

— Հը, եղաւ պատասխանը:

— «Հը» կասի... չո՞ր ու ցաւ. հրամմէ էլ չի կարողանում ասել: Այս առաւոտ տաւարը ո՞ր կողմով տարար դաշտ. — հօրս ձայնը դողդողում էր, նա վրդովմունքից ասես խեղդւում էր. ես նրան երեք այդ աստիճան բարկացած չէի տեսել. վախեցայ ու կծկւեցի:

Թորոսի փոյթը չէր. նա լուռ էր:

— Լեղուդ պապանձէի, խօսիր էէ. այգին մտել ես:

Թորոսը շարունակում էր լոռութեամբ թափ տալ տըրեխները:

— Մարգիս, — դարձաւ ինձ հայրս, — գնա այն իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ:

Ես մօտեցայ, խոտը բաց արի և միջից հանեցի խաղողի որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահաս ողկոյզներ: Ձեռք առայ և քարացայ տեղումս... Այն ես էի կոտրել. ոչ այսօր, այլ երէկ. կոտրել էի ու լոել. ողկոյզը քաշքացի, ճիւղը կոտրուեց և ես փախայ: Հայրս այս երեկոյ էր գտել ու կարծում էր թէ առաւոտեան է կոտրւած:

Յանցանքը կրկնակի էր. նախ կոտրւած էր այդ հազւագիւտ որթը, որ հօրս առանձին խնամքի առարկան էր, որովհետեւ հեռու տեղից էր բերել տւել և շուտ համնող, մեծ դեղին ողկոյզներ ունէր և նրանից պատրաստւած գինին համնում էր Աստւածածնի տօնի պատարագին, երբ խաղող են օրհնում. և եր-

կրորդ՝ որ աւելի էականն էր և աններելին, որթը կոտրողը կերել էր և խաղողը, մինչդեռ Աստւածածնի տօնը դեռ հեռու էր, «խաղողն օրհնւած» չէր, հետեւապէս՝ պաս էր: Պասակերութիւնը հօրս աչքում մեծագոյն յանցանքն էր, որ մի մարդ կարող էր գործել:

Թորոսը աչքի տակով նայեց իմ ձեռքի ճիւղին, նայեց ինձ ու գլուխը կախ քաշ ձգեց, լռեց: Ես էլ քարացել էի իմ տեղում և գլուխս վեր բարձրացնել չէի համարձակում. իմ դատաստանն էր կատարւում և ոչ Թորոսի:

—Ասա, —շարունակեց հայրս աւելի և աւելի տաքացած, —Աստւած նզովի քեզ, ով է տեսել, որ հայ քրիստոնեան Աստւածածնից երկու շաբաթ առաջ խաղող ուտի. հարամ է, չէ. նայի՞ր՝ ինչ ես արել. թող ձեռքդ կոտրէր դրա փոխարէն:

Ես դողում էի ամբողջ մարմնով և խաղողի ոսար ձեռքիս մէջ ցնցւում էր: Հօրս իւրաքանչիւր խօսքը, նրա ամեն մի անէծքը նետի պէս սիրտս էր մխւում ու արիւնոտում. ես մեխւած էի իմ տեղում և ինձ թւում էր, թէ փախչելու անկարող եմ, որ այդ ճիւղն էլ կպել է ձեռքիս և ուր գնամ, ինձ հետ է լինելու: Քաջութիւն չունէի ասելու, թէ ես եմ կոտրել և ոչ Թորոսը. բայց այնպէս կուզէի որ մէկն ու մէկը վեր կենար, այդ ասէր: Զայրանում էի նաև այդ անօրինակ Թորոսի դէմ, որ բերանը բաց չէր անում ասելու թէ ինքը չի արել, թէ այդին չի մտել:

Լուռ էր անիրաւը, և ես դողում էի զարհուրելի տանջանքի մէջ:

Մայրս մէջ մտաւ:

—Ի՞նչ ես այդքան տաքացել, տնաշէնի մարդ.

դէ բան է, պատահել է. գուցէ Թորոսը չի, գող է մտել. թիւրքերը խօ գիտես, քաղցած գէլերի պէս չոլերն ընկած աւերմունք են անում:

—Խելքիդ ինչ ասեմ, ախր կնիկ ես էէ. գողը մի ճութ խաղողի համար այգի չի մտնի, բոլոր թըմբերը պէտք է ոտի տակ տար, մարիկ-մարիկ փընտուէր գտնելու համար. տանու գող է, քեզ ասում եմ, այ այս նզովւածն է, որ լշկուել է: Զէ, թնդ խօսի էէ, թնդ ասի որ ինքը չի. տեսնում ես, կարկամւել է. Աստւած վերցնի սրան:

—Այ որդի, —Թորոսին դարձաւ մայրս կամացուկ, —ինչի՞ ես կողքդ դէմ տւել. տեսնում ես, հէրդ թնդւել է, դէ, մի ձայն տուր, ասա որ դու չես, ասա՝ գողերն են արել, խօմ բերանդ չի ցաւի, մի խօսք ասա, էլի:

Թորոսը արելիներից պրծաւ և մէկ էլ ինձ նայեց աչքի տակով. օ, այդ հայեացքը, նրքան վիշտ և նրքան արհամարհանք կար նրա մէջ. ես քիչ մնաց հալւեմ, կամ գետինն անցնեմ ոչնչանամ. նա կարծես շատ լաւ գիտէր որ ես եմ արել, և ուրախ էր, որ մի զարմանալի գիպուածով հայրս իմ ձեռքն էր գրել յանցանքիս սարսափելի նշանը, այն դժոխային ոստը, որ վառում, փոթոթում էր իմ մատները: Նա զգում էր՝ ինչպէս ես տանջւում եմ, և լուսթեամբ ճաշակում էր իմ տանջանքը: Նա գոհ էր, թէկուզ այդ լուսթեան համար նրան հազար կտոր անէին:

Ա՞հ, երկաթից էր կոփւած այդ տղան:

Ես նայում էի միայն նրան, այդ հպարտ ու յամառ Թորոսին, նրա թուխ ու թախծոտ աչքերին, որոնց տակ թագնուած մտքերը երբէք չէի հասկացել, իրար սղմած զրթունքներին, որոնք այնքան

կամք էին արտայայտում, նրա արևառ ու խոհուն դէմքին, այդ սեացած, ճաքճաքած ձեռներին, նրա մաշւած թիկունքին, և այդ բոլորը, բոլորը ինձ թըւում էր նոր, կարծես առաջին անգամն էի տեսնում նրան, և այդ արտաքինը վկայում էր շիտակութիւն, կամք, աշխատանք ու տանջանք. կիզիչ արևի տակ փշերի ու քարերի միջից որքան էր վազվել խեղճ տղան, օրեր, շաբաթներ, ամիսներ ու տարիներ, և դրա հետ միասին քանի՞-քանի անգամ ենթարկւել ձիշտ այսպիսի դառնութիւնների իմ երեսից: Եւ մի ահագին տիրութիւն ու ժայռի պէս նստեց սրտիս. շրթունքներս դողդողացին. ուզում էի ճչալ, լալ, գլխիս խփել... բայց էլի շրթունքներս կծեցի, երբ տեսայ որ թորոսը պատրաստում է դուրս գնալ: Փոթորիկը դրանով կը վերջանար, միշտ այդպէս էր լինում:

Ահա նա վեր կացաւ և առանց նոյնիսկ իր սովորական հացը վերցնելու տաշտից, շարժւեց դէպի դուռը. նա պիտի անցնէր հօրս առաջից, որ լուս հետեւում էր նրա շարժումներին. Հօրս հայեացքի մէջ կայծակ էր փայլատակում. նա գունատ էր, շունչը քթածակերից դուրս էր գալիս փնչացնելով, իսկ ձեռնափայտը դողում էր ձեռքի մէջ: Նա երբէք այդպէս սարսափելի, այդպէս անողորմ տեսք չէր ունեցել:

«Միթէ խփելու է թորոսին», մտածում էի ես. «այդ անկարելի էր. նա այնպէս բարի է»: բայց ինձ թւում էր՝ եթէ նրան խփի, ես կը մեռնեմ, չը գիտեմ ինչից, բայց անպատճառ կը ճշամ ու կը մեռնեմ, երևի կը խեղդւեմ:

«Կը խփի, թէ չի խփի, կը խփի, թէ չի խփի»,

— կրկնում էի մտքումս աչքերս յառած միայն ձեռնափայտին կամ աւելի ճիշտ՝ նրա ծայրին:

«Կը բարձրանայ, թէ չի բարձրանայ, կը բարձրանայ, թէ չի բարձրանայ». Ել ոչինչ չէի տեսնում, ոչինչ չը կար գլխումս, բացի այն փայտից, այն գեղնաւուն հոնի փայտից... Եւ ես տեսայ որ նա բարձրացաւ, այն զարհուրելի փայտը, բարձրացաւ հօրս գլխից վեր, ճօճեց օդի մէջ...

— Հայրիկ, հայրիկ... մի, մի... Բառերը խեղդւեցին իմ կոկորդում. ես նետեցի հօրս ու թորոսի մէջ, բայց անօգուտ. ես շատ էի փոքր և անզօր. ձեռնափայտն ահագին թափով իջաւ եղբօրս թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ նոյնպէս թափով, նոյնպէս անողորմ:

Թորոսը չը շարժւեց կանգնած մնաց իր տեղում, գարձեալ լուս, առանց բողոքի. նայեց հօրս բարացած, ապա աջ ձեռքով շօշափեց թիկունքից ցաւած տեղը ու, երկու կաթիլ արցունք կախւեցին նրա մոայլ, մթագնած աչքերից, իջան, իջան և այտերի վրայ քարացան մնացին:

Սոսկումի պէս մի բան, մութ ու ձնշող՝ իջաւ մեր տան վրայ, որ աւելի ահաւոր էր գառնում թորոսի լուս արցունքով:

Օ՛, այդ երկու կաթիլ արցունքը. նրանք իջան իմ սրտի վրայ, քանդեցին, աւերեցին կուծքս և խորտակեցին ինձ: Հայրս կանգնած էր գողդողալով, նայում էր ոտների առաջ, կարծես չը գիտէր թէ ինչ պատահեց: Եւ բեռը, ահագին բեռը ձնշում, ձնշում էր իմ կուրծքը, խեղդում էր ինձ, կուրծքս ուռել էր և ճշացի.

— Ես եմ, հայրիկ, ես եմ կոտրել, ես եմ գողացել, թորոսը մեղք չունի, միշտ ես եմ. ներիր.

ների՛ր, Թորհս ախպէր, իմ խեղճ ախպէր:

Բոլորը քարացան. կարծես երկինքը յանկարծ փուլ եկաւ. մայրս շւարած՝ կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ կոտրւեց և կաթը հոսեց բակում. քոյրս հորթը թողեց, որ կրկին վազեց դէպի մայրը. հայրս գլուխը բարձրացրեց, ինձ նայեց չուած ու ապշած աչքերով ու ետ-ետ գնաց, կարծես ես թունաւոր օձ լինէի. ապա ճակատը բռնեց մնաց կանգնած: Քիչ յետոյ լոռութեամբ մօտեցաւ Թորոսին, ձեռքը դրեց նրա թիկունքին.

—Չեռքս կոտրւէր, որդի, ասաց հեկեկալով... Սարգիս, Սարգիս... Թող Աստւած քեզ... զու իմ հոգին կորցրիր... Թող Աստւած քեզ... ես ի՞նչ ասեմ...

Նա շարունակել չկարողացաւ, չուզեց անիծել ինձ. արցունքը թափւեց աչքերից հեղեղի պէս:

—Էլ չեմ անի, հայրիկ... Էլ չեմ անի, երբէք, երբէք...

Թորոսը թեռվ սրբեց աչքերը, նստեց թմբի վըրայ, գլուխը ձեռների մէջ առաւ և դարձեալ մնաց լուռ:

Ա՛հ, երկաթից կոփւած այդ սքանչելի տղան, որ իր տանջանքի գնով ընկճեց, խորտակեց բոլորիս:

Այն գիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում. անքուն էի և ես. այրւում էի և էլի երկար-երկար լաց եղայ: Լուսաբացին հայրս վերկացաւ, ժամ գնաց աղօթք մը մնջալով և ես խոր քուն մտայ ու երազիս միայն Թորոսին էի տեսնում՝ ժպտուն, ծիծաղկոտ ու երջանիկ: Եւ ես այնպէս սիրմամ էի նրան. Նա այնպէս լաւ էր...

## ՃՆՃՂՈՒԿԻ ՄԱՀԸ

Նա այնպէս սիրուն էր, այնպէս կայտառ, այն ձնձուկը:

Ամեն երեկոյ վերջալոյսին, երբ արել ծածկը-ւում էր լեռների ետևում և խաւարը կամաց-կամաց պատում էր աշխարհը, ձնձուկը թառում էր պարտէզի ծառի վրայ գիշերն անցկացնելու համար:

Երկու տերենների արանքում նա տեղաւորւում էր, ինչպէս կարող էր. փոքրիկ գլուխը թագցնում էր թեփ տակ, կծկւում, փոքրանում էր, որպէսզի գիշատիչ բազէն նրան չը տեսնի խաւարի մէջ:

Եւ այնպէս անուշ-անուշ քնում էր մինչև լուսաբաց:

Արշալոյսին ամենից վաղ էր զարթնում, մեղմիւ ճթճթում էր թափահարելով իր փոքրիկ թերը, ողջունում էր ծագող արեփ առաջին ցոլքերը, ապա թռչում գնում էր իր համար կերակուր ճարելու:

Եւ այնքան քիչ բան էր հարկաւոր նրան, կըշտանալու համար:

Մի մոռացւած պտուղ ծառերի սաղարթի տակ, մի քանի հատիկ՝ արտերում կամ մեծ ճանապարհի վրայ թափւած, ու ահա նա կտցահարում էր, կե-

բակրում, ապա խաղ ու պար սարքում, ցատկում  
կտուրների տակ, պատերի վրայ:

Նրա ձայնը, նրա մեղմ ճթճթոցը լսում էր ա-  
ռաւօտից երեկոյ և անհոգ ու երջանիկ էր այն  
ճնճղուկը:

Այս ժամերին նա վախենում էր միայն բազէից,  
որ յաճախ դարան էր մտնում և վերից ցած սաւառ-  
նում, այս կամ այն ճնճղուկին ճանկում, սուր ճի-  
րաններով պատառում ու լափում:

Փոքրիկ ճնճղուկը այդ լաւ գիտէր. նա շատ էր  
տեսել իր ընկերներից մէկն ու մէկին բազէի ճանկն  
ընկնելիս, շատ էր լսել նրանց աղիողորմ ճւճոցը,  
նրանց ողբն ու ճիչը չար թռչնի ճիրաններում. լսել  
էր, փախել, կծկւել ծառերի սաղարթի տակ և մեղ-  
միւ լացել իր ընկերոջ մահը:

Ճնճղուկը վախենում էր բազէից. ահա թէ ին-  
չու, երբ նկատում էր երկնքից սաւառնող բազէի  
ստւերը, շունչը պահում էր չը ճչալու համար և իր  
տեղը չը մատնելու համար, շտապով ծածկում էր  
կտուրների տակ, պատերի արանքում կամ ճիւղերի  
տակ, լուռ սպասում էր, մինչև որ բազէն կ'անցնի,  
ապա կրկին դուրս էր գալիս, թևերը թափահարում  
և եռանդով ճուղում արեի տակ:

Այսպէս էր ապրում փոքրիկ ճնճղուկը և գոհ  
էր ու երջանիկ:

\* \*

Սուրէնը ճանաչում էր նրան:

Յաճախ լուսամուտի առաջ նստած, մոռանում  
էր դասը և յափշտակւած նայում է թէ ինչպէս փոք-  
րիկ ճնճղուկը ցատկուում է ծառից ծառ,

ոստ. ականջ էր դնում նրա ճուղիւնին, նրա մեղմ  
ճթճթոցին:

Սուրէնն այնպէս կուգէր գոնէ մի անգամ բըռ-  
նել նրան, փայփայել իր ափերի մէջ, շոյել նրա  
փետուրները, նայել աչքերին, շօշափել փոքրիկ կր-  
տուցը, պոչը:

Բայց ինչպէս բռնել. ճնճղուկը նրան մօտ չէր  
գալիս. միայն նստում էր դիմացի ծառի վրայ, ճըռ-  
ւողում էր իր ուրիշ ընկերների հետ, կամ չարա-  
ճըճի մանուկի պէս քաշում սրա նրա թեից և ընդ-  
հանուր ճուղիւն, ընդհանուր կոիւ առաջ բերում:  
Այդ ժամերին այնպէս գրաւիչ էր դառնում անհան-  
գիստ և կայտառ ճնճղուկը, այնպէս կախարդում էր  
Սուրէնին, որ սա հեալով ու բերանարաց չէր կա-  
րողանում աչք հեռացնել չարաճի ճնճղուկից:

Նայում էր Սուրէնը, նայում էր երկար, ապա  
երբ ճնճղուկը թռչում անյայտանում էր ծառերի  
մէջ, մեղմիւ հոգոց էր հանում մի բան կորցրածի  
պէս և կրկին կուանում էր դասազրքի վրայ:

Կորդում էր, բայց տառերի տեղ նրա աչքին  
գրքի երեսի վրայ շարունակ նոյն չարաճի թըռչ-  
նակն էր, որ ցատկուում էր, խաղում, թևերը թա-  
փահարում ու ճուղում. Սուրէնն այնպէս կուգէր  
գէթ մի անգամ բռնել նրան, փայփայել. գուրգու-  
րել:

Եւ նա հաւատացած էր, որ ճնճղուկը երջանիկ,  
խիստ երջանիկ կը լինի իր մօտ:

\* \*

Եւ մի անգամ Սուրէնը բռնեց ճնճղուկին... Այդ  
բանը պատահեց յանկարծ, անսպասելի կերպով:

Սուրէնը դարձեալ նստած էր լուսամուտի առաջ և գիրքը մոռացած, նայում էր հեռուն, երբ բարձրում ամպերի տակ յայտնւեց բազէն։ Փոքրիկ ճնճղուկը, գլուխը կորցրած, նետւեց դէպի պատշգամբը և ներս ընկաւ բաց լուսամուտից։

Սուրէնի սիրտը խնդաց յանկարծական ուրախութիւնից։ Նա թողեց գիրքը, ոտքի թռաւ, շտապով փակեց լուսամուտը և երկար չարչարւելուց յետոյ՝ վերջապէս կարսղացաւ բռնել իր սիրուն ճնճղուկին…

Նա հեռում ու դողդողում էր Սուրէնի ափի մէջ, թրփրտում էր դուրս պրծնելու համար, խեղճ-խեղճ բաց ու խուփ էր անում փոքրիկ կտուցը, ասես գթութիւն հայցելու համար. ի զուր… բազէից ազատւած՝ նա Սուրէնի ձեռքն էր ընկել, որ գուրգուրում էր նրան, շոյում էր, նայում էր աշքերին, կտցին, քսում էր իր երեսին, շօշափում էր կտուցը, թերը, պոչը և երջանիկ էր։

Կարմրած, շնչակտուր ու հեալով՝ նա վազեց մօր մօտ։

—Մայրիկ, մայրիկ, տես ինչ սիրուն ճնճղուկ եմ բռնել. նա ուզում է դուրս պրծնել ձեռքիցս ու փախչել, բայց ես չեմ թողնի։ Գիտե՞ս, մայրիկ, ես նրան միշտ սիրել եմ։ Բազէից վախեցաւ, ներս մըտաւ սենեակը և ես բռնեցի։ Այսաէս եմ չարչարւել, այնպէս եմ չարչարւել…

—Լսիր, զաւակս, ասաց մայրը. ի զուր ես բըռնել նրան. տես, ինչպէս հեռում է, ինչպէս դողդողում է. նա վախենում է ու դժբախտ է. թող նա գնայ։

—Չեմ թողնի, մայրիկ, նա իմն է. ես նրան այնպէս սիրում եմ։

—Սուրէն ջան, նայիր, ինչպէս նա դժբաղդ է, ինչպէս կուզէր ազատ լինել, ոստոստել ծառերի վրայ, խաղալ իր ընկերների հետ, օդի մէջ ճախրել։ Թող, զաւակս, թող որ նա գնայ։

—Ոչ, մայրիկ, ես նրան կը պահեմ, շատ լաւ կը պահեմ, կերակուր կը տամ, ջուր կը տամ խըմելու. չէ, չեմ թողնի, մայրիկ, նա իմն է և նա երջանիկ կը լինի. այ, կը տեսնես։

—Ինչքան և լաւ կերակրես, նա երջանիկ լինել չի կարող. նրան հարկաւոր է նախ և առաջ ազատութիւն, պայծառ երկինք, արև, ծառ ու ծաղիկ։ Միթէ դու երջանիկ կը զգաս քեզ, զաւակս, եթէ մէկը պահի քեզ փոքր նկուղում և լաւ կերակրի։ Չէ դու դժբախտ կը լինես, որովհետեւ կուզես վազվզել, խաղալ։ Լսիր ինձ, Սուրէն, թող որ նա թոչի գնայ։

—Ես երկար թել կը կապեմ ոտից, շատ երկար, ու կը թողնեմ, որ ցատկոտի, թոչի, խաղայ, որքան որ ուզում է։ Ես նրան լաւ կը պահեմ, մայրիկ, այնպէս լաւ կը պահեմ. այ, կը տեսնես…

\* \*

Եւ երջանիկ Սուրէնը հսկին դուրս թռու իր ճնճղուկի հետ։

Թիշ յետոյ մի երկար թել կապած ճնճղուկի ոտքից, նա վազվզում էր պարտիզում։

Սոսանալով իր ոտքի թելը, ճնճղուկը դուրս պրծաւ Սուրէնի ձեռքից, թռաւ, բարձրացաւ օդի մէջ։ Սուրէնը քաշեց թելը, խեղճ թոչունն ընկաւ խոտերի մէջ, ճչաց, թրպրտաց, կրկին ընկաւ, և այսպէս շարունակ։

Սուրէնը երջանիկ էր, երբ ճնճղուկը փռուալով բարձրանում էր օդի մէջ, իրան ազատ կարծելով, և նոյնքան երջանիկ էր, երբ նա դժբախտ և թուլացած՝ ընկնում էր խոտերի մէջ, կտուցը բաց հեռմ էր յուսահատաբար:

Երեկոյ էր արդէն և դեռ Սուրէնը պարտիզումն էր, դեռ ճնճղուկը անօգուտ փորձեր էր անում ազատւելու թելից և դէպի վեր, դէպի ազատ երկինքը բարձրանալու համար:

Սուրէնը պատրաստում էր արդէն ճնճղուկը վերցրած տուն գնալ, երբ թռչունը մի վերջին փորձ արեց ազատւելու, բոլոր ուժով դուրս պրծաւ նրա ձեռքից, թռաւ, թափով բարձրացաւ:

Մինչև որ Սուրէնը ուշքի կը գար, թելը դուրս եկաւ նրա ձեռքից և ճնճղուկը ազատ և ուրախ զընաց նստեց խնձորենու ամենաբարձր ոստի վրայ: Ճնճղուկն ազատ էր...

Սուրէնը քարացաւ իր տեղում և վշտացած ու յուսահատ նայում էր ճնճղուկին և չը դիտէր ինչ անել: Ճարը կտրած՝ նա մի քար վերցրեց և դայրոյթով նետեց դէպի ճնճղուկը. թռչունը վախեցաւ ու թափ առաւ, բայց ծառից հեռանալ չը կարողացաւ և գլխիվայր կուչ եկաւ ոստերի մէջ: Ոտքի թելը խճճւել էր ճիւղերին և նա ազատւել չէր կարողանում: Ճնճղուկը ճշաց, թրպրտաց, բարձրացաւ, կրկին քաշ ընկաւ գլխիվայր, եւ քանի աշխատում էր ազատւել, այնքան աւելի թելը խառնւում էր և նրան պինդ պահում: Խեղճ թռչունը ճշում էր, թրպրտում, բարձրանում, պտոյտներ էր գործում ճիւղի շուրջը. ի զնւր... Նա ազատւել չէր կարողանում: Քաշ էր ընկել և օրօրւում էր աջ ու ձախ:

Սուրէնը կանգնած էր ծառի տակ, տիրու-

թեամբ նայում էր թռչունի տանջանքներին և չը գիտէր ինչ անել: Նա մէկ ուզեց ճշալ, օգնութիւն կանչել, բայց ամօթից ու վախից լոեց. Նա չէր ուզում ուրիշները տեսնեն իր արած չարութիւնը, Ամաչում էր մանաւանդ մօրից, որին չէր լսել:

Երկար մտածեց, թէ ինչպէս ազատի թռչունին մահից, և փորձեց բարձրանալ ծառը և թելը կտրել: Բայց ծառը շատ հաստ էր և ճիւղը, որից կախւած էր ճնճղուկը, շատ բարձր ու բարակ:

Սուրէնը գնում էր գալիս, շրջաններ էր կատարում զայրոյթից ու ցաւից, իր չորս կողմն էր նայում յուսահատաբար, յետոյ դարձեալ ճնճղուկին և ճար գտնել չէր կարողանում նրան ազատւելու:

Ճնճղուկը կախւած էր վերևից գլխիվայր, ճըշում էր ու հեռմ:

Սուրէնը հազիւ էր զապում իր արցունքը, բայց դարձեալ մօրը չէր կանչում, ամաչում էր... Ճարը կտրած՝ նա սկսեց փայտի կտորներ շպրտել դէպի ճնճղուկը, որ նա թափ առնի, գուցէ կարողանայ թելը կտրել ու փախչել. ի զնւր... Ճնճղուկը դարձեալ թրպրտաց մի քանի անգամ, դարձեալ ճւաց խեղճ-խեղճ և մնաց գլխի վայր կախւած օդի մէջ:

Սուրէնի սիրտը կտրատւում էր. նա նստեց ծառի տակ, կծկւեց և դառն կերպով հեկեկաց:

Արցունքը հոսում էր աչքերից, բայց սիրտը չէր հովանում, որովհետեւ ճնճղուկը վերից օրօրւում էր նրա գլխի վրայ:

Նա այնպէս դժբախտ էր...

\* \*

Արել իջաւ, իջաւ ու ծածկւեց լեռների ետեւում. ստւերները կախւեցին, պարտէզը մնջեց ու մթնեց...

— Սուրէն, Սուրէն...  
 Մայրն էր կանչում:  
 Սուրէնը յուսահատ ու վշտոտ տուն դարձաւ,  
 լուռ կծկւեց մի անկիւնում:  
 — Սուրէն, ինչ արիր ճնճղուկը, հարցը մայրը:  
 — Չեռքիցս դուրս պըծաւ ու փախաւ:  
 — Այդ ինչ լաւ է եղել: Դրա համար ես քիթդ  
 կախել. հանգստացիր, զաւակս, չէ նա դժբախտ կը  
 լինէր և վշտից կը մեռնէր, եթէ պահէիր մեզ մօտ.  
 Թռղ գնայ ազատ ապրի: Այնպէս լաւ է ազատ լինել:  
 Սուրէնը լուռ էր:  
 — Սուրէն, արի, հաց կեր:  
 — Ես... քաղցած չեմ...  
 Սուրէնը քաղցած էր:  
 Նա հացին չը մօտեցաւ, ասաց որ ախորժակ  
 չունի, և շուտ պառկեց քնելու, յուսալով որ գուցէ  
 լուսաբացին ճնճղուկը մի կերպ կազատւի և կը  
 թռչի:  
 Անկողին մտաւ և երկար ժամանակ քունը չէր  
 տանում:  
 Նա այրւում էր, շուռ ու մուռ էր գալիս տե-  
 ղի մէջ, անքում էր, շունչը կտրւում:  
 Ծառի վրայ կախւած ճնճղուկը միշտ աչքի ա-  
 ռաջն էր և նրա խեղճ ու լալկան ճիչը՝ միշտ ական-  
 ջում:  
 Վերջապէս քունը տարաւ:  
 Եւ երազում նա ընկնում էր խոր ու մութը  
 փոսի մէջ, բայց կախւեց, եզերքից քաշ ընկաւ:  
 Ներքե նայեց. խորքում, փոսի յատակին պը-  
 պըցած էին երկու սկ ահազին կատուներ: Սուրէնը  
 տեսնում էր նրանց աչքերի փայլը, լսում էր նրանց  
 մոմոցը: Բոլոր ուժով չանգում էր փոսի եզերքը

որ չը ընկնի, բայց յանկարծ հողը փուլ եկաւ և նա  
 ընկաւ հէնց կատուների վրայ:  
 Սուրէնը ճշաց ու զարթնեց:  
 Երազ էր:  
 Աչքերը բացեց, շուրջը նայեց: Մայրը նստած  
 ճրագի առաջ կար էր անում:  
 — Քնիր, բալիկ, քնիր, ինչու ես ճշում, — ասաց  
 մայրը:  
 — Մայրիկ, կատուները... ճնճղուկը... Բայց էլ  
 չը շաբունակեց, լոեց ու նորից քուն մտաւ:  
 \* \* \*

Այն առաւօտ Սուրէնը շատ վաղ զարթնեց,  
 շտապով հագնւեց և խորյն պարտէզ իջաւ:  
 Նա այնպէս կուզէր որ ճնճղուկը էլ այնտեղ չը  
 լինէր...  
 Հասաւ ծառին. նայեց և բարձր ճիչ արձա-  
 կեց... Ճնճղուկն իր տեղումն էր, գլխի վայր կախ-  
 ւած ճիւղից, բայց ոչ թրպրտում էր, ոչ թռչում և  
 ոչ ճշում...  
 Նա մեռած էր...  
 Սուրէնը երկու ճեռքով երեսը ծածկեց, նըս-  
 տեց ծառի տակ և սկսեց հեկեկալ:  
 — Սուրէն ջան, ինչու ես լալիս:  
 Մայրն էր, որ նրա ետկից դուրս էր եկել պար-  
 տէզ, իմանալու համար, թէ որդին ինչ ունի այն-  
 տեղ այսպէս վաղ առաւօտեան:  
 Սուրէնը պատասխան չը տւեց և միայն լալիս  
 էր, լալիս էր...  
 — Սուրէն...  
 Մայրը քնքշութեամբ գրկեց նրա գլուխը, և չէր

հասկանում, թէ ինչ է պատահել իր զաւակին:  
— Սուրէն, ինչու ես լալիս:

Պատասխանի փոխարէն Սուրէնը ձեռքը հեռացրեց երեսից և մատով ցոյց տւեց փոքրիկ ճշնձղուկի դիակը, որ մեղմիւ օրօրւում էր ծառի վրայ:

Մայրն ամեն ինչ հասկացաւ...

— Սուրէն, զաւակս, ես քեզ ասացի, ազատ թող խեղճ ճնճղուկին...

Բարձր սանդուխք դրին, ցած բերին և թաղեցին նրան փոքրիկ գերեզմանում, որ Սուրէնը փորեց:

Այսպէս մեռաւ այն ճնճղուկը, որ սիրուն էր ու կայտառ, և այնպէս սիրում էր ազատութիւնը:



## ՇԵԿՈՆ ՈՒ ՄԱՐԱԼԸ

Վարդանն իր Շէկօն ունէր և Սուրադն իր Մարալը:

Եւ նրանք մեր գիւղի փառքն ու պարձանքն էին, այն երկու գոմեշները, Շէկօն ու Մարալը:

Երկուսն էլ խոշոր, ուժեղ ու հաստավիզ, երկուսն էլ սիրուն կազմւածքով, գեղեցիկ ու ջանէլ: Միայն նրանցից մէկը բաց գոյն ունէր, ճակատին սպիտակ, սիրուն բիծ և պոչի ծայրին սպիտակ երկար փունջ, որ նրան մի առանձին վայելչութիւն էր տալիս, մինչդեռ միւսի մարմինը բոլորովին թուխ էր և ոչ մի ճերմակ... նշան չէր խանգարում նրա թանձր, կոշտ մազերի միապաղաղ սեռվթիւնը:

Գեղեցիկ էին Շէկօն ու Մարալը իրանց հաստ պարանոցով, իրանց լայն ու լերկ գաւակներով, իրանց հարթ թիկունքով և հպարտ, խրոխտ շարժումներով: Գեղեցիկ էին մանաւանդ նրանց գլուխները:

Զոյգ սրածայր եղիւրները բարձրանում էին հարթ ու լայն գանգերի վրայ և գեղանկար ու սպառնական ձեռվ աղեղւում էին դէպի ճակատը. ուռուցիկ և խոշոր աչքերը իրանց շարժուն գնդերով փայլում էին ճակատի վրայ, ինչպէս շիկացած ածուխներ, և լայն ոռւնգներից նրանց ուժեղ շունչը դուրս էր գալիս լիքը փնչոցով:

Գեղեցիկ էին Շէկօն ու Մարալը, գիւղի պար-

ծանքն էին, բոլորի սիրոյ և հիացմունքի առարկան։  
Եւ նրանք իրար թշնամի դարձան, կատաղի հակա-  
ռակորդներ։ Ո՞վ էր մեղաւորը, ո՞վ արդար, գիւղում  
չէին ասում. յայտնի էր միայն, որ Մարալը աւելի  
կուարար էր, աւելի անհանգիստ, բայց և ամենքը գի-  
տէին որ ի հարկին, Շէկօն նրանից ետ չի մնայ։

Վարդանն իր Շէկօն ունէր և Մուրադն իր Մա-  
րալը, և երկու գոմէշներն իրարու ախոյեաններ էին,  
միշտ իրարից հեռու, միշտ խոժոռ ու կատաղի։ Մէ-  
կը՝ գիւղի մէկ թաղում, միւսը՝ միւս թաղում տէր  
էին ու իշխող։

Ոչ ոք նրանց չէր տեսել միասին դաշտում կամ  
գիւղում, արածելիս կամ ամոլին լծւած գութանի  
տակ. նրանք արածում կամ աշխատում էին ջոկ-ջոկ  
իրարից հեռու։

Անողորմ, անհաշտ հակառակորդներ էին։

Երբ առաւօտեան Վարդանն իր Շէկօին քշում  
էր դաշտ դէպի արեելք, ապա հաստատ կարելի էր  
տաել, որ Մուրադն իր Մարալին տարել էր դէպի  
արեմուտք, և նրանցից իւրաքանչիւրն ունէր իր  
ժահակը, իր գալարուն և երկար խարազանը գոմէշ-  
ներին զսպելու համար։

Նրանք երբէք չէին հանդիպում իրար, Շէկօն  
ու Մարալը. բայց ամեն մէկը կարծես իմանում էր  
որ գիւղում ինքը մենակ չի, որ իրանից հեռու, հա-  
կառակ կողմի դաշտերում, արածում էր մի ուրիշը,  
իր հակառակորդը։ Նրանք իրար չէին տեսնում,  
բայց զգում էին իրար ներկայութիւնը հեռաւորու-  
թիւնից և երբեմն-երբեմն դունչները վեր ցցած՝ փըն-  
չացնում էին, հոտուում, փնտուում իրար։

Աշխարհը նեղ էր գալիս Շէկօյին ու Մարալին,

Բայց Վարդանն ու Մուրադը զգոյշ էին, դաշտերը  
լայնարձակ։

\* \* \*

Եւ տարիներ շարունակ երկու ախոյեանները,  
Շէկօն ու Մարալը, վնասում էին իրար, տարիներ  
շարունակ նրանց կատաղութիւնը եռում էր կըրծք-  
ների տակ։ Երբեմն դաշտերի մէջ յանկարծ հնչում  
էր մէկի սպառնական մոնչոցը, որ լայն արձա-  
գանքներով տարածւում էր հեռու, հեռու. հակա-  
ռակորդը լսում էր այդ ձայնը, ցնցում էր ականջ-  
ները, ցնցում էր եղջիւրները, բարձրացնում էր զը-  
լումը և նոյնպէս մոնչում էր, ուժեղ ու երկար,  
կարծես կուի կանչելով իր ախոյեանին։

Լեռ ու ձորը այդ ժամին թնդում էր նրանց  
ձայներից, նրանց մոնչոցները բարձրանում, գալար-  
ում էին օդի մէջ, իրար էին խառնում և մարում  
դաշտերի ամայութեան մէջ։

Եւ Շէկօն ու Մարալը իրար չէին տեսնում.  
Վարդանն ու Մուրադը նրանց քշում էին իրարից  
հեռու. դաշտերը, արօները լայն էին։

Ամեն գարնան երկու հակառակորդների հանդի-  
պումը գառնում էր աւելի վասնգաւոր, որովհետեւ  
ձմբան պարապութիւնից նրանք աւելի ուժ ու ե-  
ռանդ ստացած՝ աւելի կատաղի էին դառնում։ Երբ  
արևի առաջին շողերի տակ ծաղիկ ու կանանչ գար-  
դարում էին լեռ ու դաշտ, երբ առւակները պատ-  
ռելով սառցէ պատեանը կարկաչում էին կանաչա-  
պատ թմբերի տակ, ծառերը իրանց ծաղիկների  
բուրմունքով լցնում էին օդը և թռչունները դայ-  
լայլում էին հովիտներում ու այգիներում, այն ժա-

մանակ Շէկօն ու Մարալը դուրս էին գալիս գոմերից, ինչպէս երկու կատաղած վիշապներ:

Մորթիները ձիթած ու փայլփլուն, եղջիւրները խնամքով սրած և պոչերն ու ճակատը կարմիր գոյնով ներկած, նրանք արեին ու լրյախն կարօտ, խայտալով վազում էին դէպի դաշտերը, չը նայելով իրանց գեր ու ահագին մարմիններին. Զմերային գոմի մշտական խաւարից մթազնած նրանց աչքերը բոցավառում ու փայլատակում էին գարնան արեի շողերի տակ, և նրանք լայն կրծքով շնչում էին կենդանարար ու ջերմ օդը:

Գիւղում այդ ժամանակ ամենքն էին վախենում, որ չը լինի թէ Շէկօն ու Մարալը իրար հանդիպեն. վախենում էին, բայց և կուղէին որ վերջապէս մի անգամ զարկւեն իրար այդ երկու հակառակորդները, մի անգամ գիւղը հանդիսատես լինի նրանց կատաղի կուին:

Վարդանն ու Մուրադն էին դողում այդ հանդիպումից, և նրանք առանձին զգուշաւորութեամբ էին հսկում կատաղի կենդանիներին, մինչև որ աշխատանքների հաստ լուծը, խոր ակօսում թաղւող ծանր գութանը կամաց-կամաց թուլացնեն նրանց կուի եռանգը, նրանց կատաղութիւնը:

Դարձեալ գարուն, դարձեալ ձմեռ, և Շէկօն ու Մարալը չէին հանդիպում իրար, չէին ընդհարուում, ապրում էին ջոկ-ջոկ լայնարձակ դաշտերում:

Եւ գիւղն սպասում էր...

\* \* \*

Եւ մի անգամ գարնանը կոիւը պատահեց յանկարծ:

Վաղ առաւօտից Վարդանն իր Շէկօին դէպի ա-

րմելք քշեց, իսկ Մուրադն իր Մարալին դէպի արմմուտք: Մարալն այդ օրն առանձնապէս անհանգիստ էր, չէր արածում, կճղակներով քանդում էր հողը, հոտոտում էր օղի մէջ, տնքում էր, փնչացընում, ապա դունչը բարձր ցցած՝ մոնչում էր ահագին ձայնով: Յանկարծ նա թափ առաւ և խելազարի կերպով վազեց հակառակ կողմը, ոտքի տակ տալով դաշտեր, արտեր, բանջարանոցներ: Ի գուր անցաւ Մուրադի և ուրիշ հօտաղների ջանքերը նրան ետ կանգնեցնելու, ի գուր անցան խարազանների և մահակների հարւածները, Մարալը վազում էր ու վազում: Վերջապէս նա հասաւ մի կանաչազարդ թմբի դիմաց, եղջիւրները դէմարեց ու սկսեց քանդել ու հողը ցրիւ տալ, ապա դունչը վեր ցցեց և ահագին ձայնով մոնչաց:

Եւ յանկարծ, որտեղից որտեղ, նրան ի պատասխան լսեց Շէկօի մոնչոցը հակառակ կողմից: Մարալը աչքերը չուց, ականջները ցցեց աւելի լաւ լսելու համար, քթածակերն ուոցրեց և այնուիս մը-ունչաց, որ լեռ ու ձոր թնդաց: Դարձեալ մի անգամ լսեց հակառակորդի պատասխանը և շուտով հեռու բլրակի թիկունքից բարձրացաւ Շէկօի գլուխը: Ախոյեաններն իրար տեսան:

Առաջին անգամ, երկար տարիներից յետոյ Շէկօն ու Մարալը տեսան իրար: Այնուհետև կատարեց մի զարմանալի բան: Կենդանիները նախ կանգառան դէմ առ դէմ, մի առժամանակ գլուխները դէպի երկինք ցցած, վերջին անգամ տնքացին ահագին ձայնով, փնչացըն քթածակերից և աչքերից կրակ ցայտելով իրար վրայ վազեցին կատաղի արագութեամբ:

Վարդանն ու Մուրադը անկարող եղան նրանց

առաջը փակել, կանգնեցնել. ի զուր անցան սարսափած հօտաղների ճիշն ու աղաղակը: Կրակ կըտրած կենդանիների սրբնթաց վազքից գետինը թընդում էր, նրանց ոտների տակից փոշու ամպեր էին բարձրանում և նրանք տարւում էին դաշտերի միջից, ինչպէս երկու բլուրներ: Եկան, եկան և ահագին թափով զարկւեցին իրար:

Նրանց գանգերի թրիսկոցը և եղջիւրների ճարճատիւնը բռնեց շրջակայքը: Սարսափած հօտաղները, Վարդանն ու Մուրադը վազեցին դէպի գիւղ օգնութիւն կանչելու:

Շէկօն ու Մարալը փշրում էին իրար:

\* \*

Գիւղը ոտքի թռաւ ու շարժւեց. դաշտերից ահաւոր լուր եկաւ, թէ Շէկօն ու Մարալը դիպան իրար:

Ո՞րտեղ, ի՞նչպէս, ի՞նչու, այդ ոչ ոք չէր ասում, միայն ամեն մի հասնող հօտաղ հնալով, տնքալով, սպրդնած կարճ արտասանում էր երկու խօսք՝ «Շէկօն, Մարալը»...

Հաւար էր...

Ոչ ոք մնացածը չէր հարցնում, այլ շտապում էր վայրկեան առաջ վազել դէպի դաշտ, դէպի կըռւի վայրը, խորապէս հաւատացած, որ այնտեղ երկու հակառակորդները քըքրում, փշրում, խորտակում են իրար սուր եղջիւրներով: Վազում էին ամենքը՝ մարդ, կին, մեծ, փոքր, շատերը դիտելու զարհուրելի կոիւը, ուրիշներն շտապում էին բաժանելու կենդանիներին. տղամարդիկ գնում էին մահակներով, խարազաններով, հաստ պարաններով:

Դլուխների ծով էր, որ ծփծփում էր դէպի դաշտերը տանող ճանապարհի վրայ. բոլորը վազում էին իրար հրհրելով, կարճ հարց ու պատասխան տալով, նոյնիսկ կանայք շտապում էին հերիւ տանելով իրանց հետ նաև ծծկեր մանուկներին կըծքերից կախ, իսկ աւելի մեծերը խայտալով վազում էին հասակաւորների հետ դէպի կուրի վայրը:

Շէկօն ու Մարալը կուրում էին դաշտերում:  
Հաւար էր...  
Եւ գիւղը շարժւեց:

\* \*

Հասան...

Կանայք շարւեցին առուների բարձր թմբերի վրայ. չարաճճի մանուկները թռչունների պէս թառեցին այգիների պատերի վրայ, ծերերը նրանց մօտ պատերի տակ տեղ բռնեցին և ամենքը ձեռքերը ճակատներին դրած՝ նայում էին հեռուն:

Եւ հեռուն սարսափելի էր:

Հօտաղների և գիւղից հասած ջահէլների ահագին շրջանակի մէջ Շէկօն ու Մարալը գլուխ գլխի տւած սկսել էին զարհուրելի կոիւը փոշու ամպերի մէջ: Գոմէշների շարժումների հետ շրջապատող բազմութիւնը տարւում էր ետ ու առաջ, աջ ու ձախ: Կուրող կենդանիների փնչոցն ու տնքոցը, եղջիւրների շրիսկըլսկոցը, մարդկանց ճիշն ու աղմուկը իրար էին խառնւել և շրջակայքը թնդում էր:

Տեսարանը ահաւոր էր:

Կախւեցին գոմէշների պոչերից ետեւ քաշելու համար. վայտերով, խարազաններով հարւածեցին գլուխներին, գունչերին, ոտներին, — ոչինչ չօգնեց:

Շէկօն ու Մարալը, հարւածներից աւելի կատաղած, աշխատում էին ոչնչացնել իրար։ Նրանց ուռած ու արնակալած աչքերը կրակի պէս վառւում էին և քիչ էր մնում դուրս ընկնէին խոսոչներից. քթածակերը փնչացնում էին փուքսերի պէս, ոտների ջիղերը կծկում էին և բացւում, ահազին փորերը ուռչում էին ու կծկում, ոսկորները ճարճատում. նրանք սեփական պոչերով, ինչպէս խարազանով, կատաղաբար հարւածում էին իրենց մարմինը, ասես աւելի կատաղելու համար, տնքում էին զօրից, եղջիւրներով իրար պարանոցն ու օձիքը քրքրում, իրար ետ-ետ մղում, աշխատելով մահացու հարւած տալ հակառակորդի փորին։ Մերթ նրանք գալարւում էին և աջ ու ձախ եղջիւրներն իրար ձգած սղում էին կողք կողքի, մերթ գալիս էին դէմ առ դէմ, իրար մղում ետ ու առաջ։

Արդէն Մարալի աչքն էր պատուած, Շէկօյի կուրծքն ու պարանոցը մի քանի տեղից վիրաւոր, արիւնը ծորում էր երկսից և եղջիւրները կարմիր էին ներկւած, գետինը նրանց ոտների տակ ակոււել էր վարած արտի պէս, բայց չէին բաժանւում, չէին թողնում և ոչ մէկը չէր մտածում տեղի տալ միւսին։

Զարհուրելի տեսարան էր։

Շէկօն ու Մարալը փշրում, խորտակում էին իրար. կարծես նրանց երկսին միասին տեղ չկար երկիս վրայ։ Բազմութիւնը սոսկում էր, շւարել էր։

\* \*

«Զւան բերէք», ճշացին այս ու այն կողմից։  
«Շուտով չւան», կանչեցին հօտաղները։

Եւ բերեցին հաստ չւանները, միաժամանակ ձգեցին երկսի կրծքերից և երկու կողմից սկսեցին ետ-ետ քաշել ահազին բազմութեամբ նրանց իրարից զատելու համար։

«Քաշեցէք, քաշեցէք»։

Բազմութիւնը տնքում էր ու ձգում չւանները. կուռզները բոլոր ուժով ճգնում էին վերստին մօտենալ, առաջ էին նետում, գլուխները ցնցում կատաղաբար, խոժոռ աչքերով իրար էին լափում. իգներ։ Չւանները ձգում էին ու ձգում և կենդանիների ահազին մարմինները հեռանում էին իրարից։ Շուտով երկսի արանքում ներս ընկան մահակաւոր ու խարազանաւոր հօտաղներ, վերստին հարւածներ նրանց գլխին ու ոտներին, վերստին ճիչ, աղմուկ, ուրախաձայն բացակաչութիւններ, և Շէկօն ու Մարալը իսպառ բաժանւեցին իրարից առանց իրար յաղթելու։

Եւ ամեն մէկին շրջապատած խարազանաւորների ու մահակաւորների ահազին բազմութեամբ քըշցցին հակառակ կողմեր, յանդիմանելով հօտաղներին նրանց անզգուշութեան համար։

Կոիւը վերջացաւ։

\* \*

Ոչ, կոիւը չը վերջացաւ.

Այնուհետև ինչ կատարւեց, ոչ ոք չէր կարող ասել. միայն վերստին ննչւեց նախ մէկի, ապա միւսի կատաղի մոնջոցը, նրանք համարեա միաժամանակ ետ դարձան, թափ առան և բազմութիւնը ոտքի տակ տւին։

Ի գուր անցան մահակների և խարազանների

հարւածները, ի զուր ճիշերն ու աղմուկները. Շէկօն ու Մարալը բոց կտրած հնալով, տնքալով, փընչացնելով, ոտքերի տակ ամեն ինչ և ամենքին որորելով իրար վրայ վազեցին:

«Փախէք, փախէք...»:

Բազմութիւնը հազիւ կարողացաւ նրանց ոտների տակից խոյս տալ իրար տրորելով, ճշալով:

Կատաղած ախոյեանները մի վերջին անգամ իրար վրայ դնացին բոլոր ուժով. վերջին անգամ նրանց գլուխները դէմ առ դէմ եկան ահազին թափով, վերջին անգամ նրանց գանգերը զարկւեցին իրար, ինչպէս կարծր ժայռի երկու կտորներ. զարկւեցին, լսեց մի խլացուցիչ, մի սարսափելի որստ, և նոյն վարկեանին երկու թանձր մարմիններ ետեատ գնացին և միաժամանակ խորտակւած դետին ընկան, տնքալով և փնչացնելով:

Բազմութիւնը միաբերան ախ քաշեց, Վարդանն ու Մուրադը դլիներին տւեցին, հեռու կանգնած կանայք ճշացին ու ծնկներին տւին, ծերերը գլուխները օրօրեցին վշտով:

Հարւածը զարհուրելի էր, յետին հարւածը:

Շէկօն ու Մարալը ընկան փշրւած գանգերով, ուռնգերից ժայթեց թանձր սև արիւնը, աչքերը շաղւեցին, ոտները ջղածգաբար ցնցւեցին քանդելով դետինը, և նրանք փուլեցին դէմ առ դէմ:

Վարդանը Շէկօնի գլուխն էր գրկել ու հեկեկում, Մուրադը՝ Մարալի. երկուսն էլ անշնչացան ու ձգւեցին լայնարձակ դաշտում:

\* \*

Այսպէս ընկան Շէկօն ու Մարալը լայնարձակ, կանանչ դաշտերում: Խաւարն իջաւ, իջաւ լեռներից:

Գիշերը բռնեց լեռ ու ձոր, ասաղերը մէկիկ-մէկիկ բացեցին աչքերը երկնքում, գաշտը մնջեց, առւակները աւելի բարձր խոխոջացին լռութեան ու խաւարի մէջ, խոտ ու ծաղիկ մեղմիւ փսփսացին իրար ականջին այն օրւայ զարմանալի կռւի մասին և Շէկօն ու Մարալը այն տեղ էին, կողք կողքի, ուռած, այլանդակ ու ահագին:

Լեռներից իջան քաղցած գայլերը, այլերից գուրս եկան արիւնաբրու բորենիները, ցցեցին իրենց զգւելի դնչերը, հոտոտեցին օդի մէջ զիակները, ոռնացին զիլ ու բարձր՝ «Առւ, առւ, առւ...» և իրար կրծոտերովու քաշքշելով, խումբ-խումբ դիմեցին զէպի այնտեղ, ուր ընկած էին Շէկօն ու Մարալը:

Եւ քաղցած արիւնաբրու գաղանները խաւարի և լռութեան մէջ քրքրում էին նրանց միսերը, կըրծոտում ոսկորները, քաշքշում փորոտիքը, կամ զըլուխները ներս թողած նրանց փորերում՝ մոմում էին կատաղաբար, ատամները բաց անում ու չըխկշըխացնում, մազերը ցցում, ապա իրար վրայ յարձակւում, խեղգոտում, բզքտում իրար, վերստին ոռնում երկնքի երեսին, վերստին սկսում քրքրել ու լափել Շէկօնի ու Մարալի զիակները:

Գիշեր էր, սև խաւար գիշեր:

Թամիները լեռներից փչում էին, լալիս էին դիակների վրայ, հեծկլտում էին և Շէկօնի ու Մարալի սուզին անում կէս գիշերին ամայի դաշտերում:

Ու հեռու գիւղում, մութ խրճիթների սև յարկերի տակ սգում էր գիւղը, սոսկումով ականջ էր դնում գաղանների սռնոցին: Իսկ Վարդանն ու Մուրադը քամիների հետ լալիս էին Շէկօնի ու Մարալի համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0313011

### Ընկերութեանս ՚րատարակութիւնները.

1.	Ա. Ռոգլէս,	Բէն-Հաւը,	հ. 4.	Թարգմ.	անզլ.	Փ. Վարդանեան,		— 75
2.	Նոյն,	հ. 11.						— 75
3.	Շիրվանզագէ	Արաբարը						— 25
4.	Մուրացան,	Քէորդ	Մարզպետունի,	պատմական	վէտ			— 20
5.	Փուկովսկի,	Քնած արքայադուստրը,	պատկ.	հէք.	փոխ.	Աթ.	Խնկոյեան	— 15
6.	Ստ.	Տէր-Աւետիքեան,	Պատմւածքներ					— 50
7.	Նար-Դուս.	Մահը,	վէպ					— 20
8.	Ն.	Բորակին,	Ստորերկշայ կը կըսկ.	պատկ.				— 50
9.	Զ.	Դիկեան,	Դաւիթ Կօպաչէրֆիլդ.	պատկ.	վէտ.	մասն առաջին,		
		անզլ.	Թարգմ.	Փ.	Վարդանեան			— 75
9.	Նոյն,	մասն երկրսրդ						— 75
1.	Նոյն,	մասն երրորդ						— 75
2.	Շիրվանզագէ	Երկերի ժողովածու;	հատ.	IV				— 50
3.	Գ.	Ֆեմիլ-Շնան,	Բանառտեղծութիւններ.					— 50
4.	Ռոկէ Աղջիկը,	Թարգմ.	I.	Մէլիք-Աղամեան				— 7
5.	Ակ-Բօղատ,	Թարգմ.	Ս.	Թորոսիան				— 15
6.	Մտեփաննոու	Նազարեանի երկերը,	հատոր	1				— 50
7.	Սպիտակ տառեղնիկը,	փոխ օր.	Ն.	Գրիգորյան				— 20
8.	Տէր-Աւետիքեան,	Բուտօնը						— 15
9.	Անուշ.	Տէր-Ղևոնդեան,	Ուսենի					— 40
9.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.		— 30
1.	Դրիմմ Եղբայրների	Հէքիաթները,	պըսկի					— 25
2.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.		— 25
3.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.	Ճ.		— 25
5.	Աւետիս	Ահաբոնեան,	Փոքրիկ	պատմւածքներ				— 25

### ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1.	Գաբրիէլ ԳյԱնունցիօ.	Զիօկոնդա.	ողբ.	5 ար.	Փր.	թբգմ.	Ս.	Յակոբիան:
2.	Իլ.	Ճաւճաւածէ.	Մուրացկանի պատմածը,	վր.	թբգմ.	Տ.	Փիրույլան:	
3.	Ահաբոնեան,	Աստծու կրտիկը:						
4.	Ճ.	Խշկիկչ.	Թագաւոր.	սուս.	Թարգմ.	Յ.	Յովհաննիսիան:	
5.	Յ. Մալիսանեան,	Յանցանքը:						
6.	Աստծօն Ջիբոյ.	Պատմածքներ,	սուս.	Թարգմ.	Ա.	Աղատ:		
7.	— 12.	Ա.	Գրիբանկով,	Խելքից պատուհաս,	կոմ.	չարս գործ.	ստոնաւու	
8.	Մարգարիտն,	Մանելէլեանի:						
9.	Լորդ Բալբոն,	Մանիքրէզ.	անզլ.	Բնագրից թարգմ.	Տիրայը	Վարդ.		
9.	Գի դը-Մապանան,	Լ ձարպագունդը,	լլ.	Զարգը.	Գրանս.	Թարգմ.	Ռ.	Խան-Աղուտ:
10.	Վալեգիսան,	Բժիշկը,	դրամու Յ գործ.:					
— 17.	Կնուս Համսուն,	Պան.	Լէյտընանս թումաս	Գլանի	Թղթերից,	գերմ.		
	Թարգմ.	Աւ.	իսահակեան:					
	Թերուու զիոն խոստվաները տ.	Ն.	Աթայիսնի:					
	Ֆիօդոր Բօնովիչ արքան,	ողբ.	5 ար.	Բարգմ.	Տ.	Չովհաննիսիան:		
22.	Հնը Դն.	Չուղիսան,	Հագուր,	զելու.	Թարգմ.	Գ.	Սլթունեան:	
	իիրԱթԱՆՉԻԻՐ ՀԱՄԱՐԾԻ.	15 կ.						

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Զարարաստիկ թուղթը,	Ստ.	Տէր-Աւետիքեան					— 8
Եհապետական տուն,	Մովկէս Ղոկասիանց						— 5
Գործակատար Մարտիրոսը,	Ս.	Մաննազարեան					— 7

Գի՞նն է 25 կիլ.